Վարկ Կոնվերս Բանկին՝ «Կանայք բիզնեսում» (WiB) ծրագրի շրջանակներում

Երկիր	ՀԱՅԱՍՏԱՆ
Ծրագրի համարը	50166
Բիզնես ոլորտ	Ավանդային վարկ (բանկեր)
Պետական/մասնավոր	ՄԱՍՆԱՎՈՐ
Բնապահպանական կատեգորիա	Ֆինանսական հաստատություն (FI)
Խորհրդի նիստի նախատեսված ամսաթիվը	2020թ. հունվարի 21-ը
Կարգավիճակ	Հաստատվել է տնօրենների խորհրդի կողմից
Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման ամսաթիվը	2020թ. հունվարի 20-ը

Ծրագրի նկարագրություն

Կոնվերս Բանկին տեղական արժույթով մինչև 2 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք առանց գրավի առաջնային վարկի տրամադրում՝ Արևելյան գործընկերության երկրներում «Կանայք բիզնեսում» (WiB) ծրագրի շրջանակներում, կանանց կողմից ղեկավարվող ՄՓՄԶ-ների հետագա վարկավորման համար:

Ծրագրի նպատակները

Ծրագիրը նպատակ ունի խթանել կանանց շրջանում ձեռներեցությունը և մասնակցությունը բիզնես ոլորտում՝ բարելավելով նրանց համար ֆինանսավորման և խորհրդատվության հասանելիությունը՝ հատուկ վարկային գծերի և համապատասխան տեխնիկական աջակցության ծրագրերի միջոցով: Հատուկ ուշադրություն կդարձվի մարզերում միջոցների բաշխմանը և նոր հաճախորդների ներգրավմանը:

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Ներառական. Ծրագիրը կնպաստի Հայաստանում ֆինանսավորման հասանելիության առումով գենդերային տեսակետից ներառականության բացի լրացմանը: Դա կօգնի Կոնվերս Բանկին մշակել, փորձարկել և առաջարկել հատուկ հարմարեցված կայուն վարկային մեխանիզմներ կանանց կողմից ղեկավարվող ՄՓՄՁ-ների համար՝ տեխնիկական աջակցության միջոցով, ինչպես նաև կամրապնդի բանկի կարողությունները՝ մարքեթինգի և իրազեկման այլ գործունեության միջոցով թիրախային հատվածի արդյունավետ ծածկույթն ապահովելու առումով: Ծրագիրը կբարելավի նաև տեղական արժույթով ժամկետային ֆինանսավորման հասանելիությունը երկրում կանանց կողմից ղեկավարվող ՄՓՄՁ-ների համար:

Մրցակցային. Ծրագիրը սատարում է Հայաստանում կին ձեռներեցների մրցունակությանը՝ հեշտացնելով նրանց համար տեղական արժույթով ֆինանսավորման հասանելիությունը, ինչպես նաև նպաստում է Կոնվերս Բանկի մրցունակությանը՝ օժանդակելով նրան բանկային պրոդուկտների պորտֆելի ընդլայնման գործում:

Հաճախորդը

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ

Կոնվերս Բանկը Հայաստանում տեղակայված բաժնետիրական ընկերություն է և դինամիկ զարգացող բանկ, որն առաջարկում է բանկային ծառայությունների լայն տեսականի ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Հայաստանի 17 բանկերի շարքում այն զբաղեցնում է 6-րդ տեղը իր ընդհանուր ակտիվներով (շուկայի մասնաբաժինը՝ 5,6%), վարկային պորտֆելով (շուկայի մասնաբաժինը՝ 6,2%) և հաճախորդների ավանդներով (շուկայի մասնաբաժինը՝ 6,5%) 2019թ.-ի 3-րդ եռամսյակի դրությամբ: «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն պատկանում է արգենտինահայ գործարար պարոն Էդուարդո Էռնեկյանին:

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

2,000,000.00 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր գումարը

2,000,000.00 ԱՄՆ դոլար

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է FI (ՖՀ) կատեգորիայի (ԲՍՔ 2014): Կոնվերս Բանկը Առևտրի դյուրացման ծրագրի (TFP) գործող հաճախորդ է և տրամադրել է Բնապահպանական և սոցիալական

փորձաքննության (ESDD) նորացված հարցաշարի պատասխանները՝ հաստատելու ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսական հաստատություններին ներկայացվող պահանջներին իր համապատասխանությունը: Կպահանջվի, որ Կոնվերս Բանկը բավարարի ՎԶԵԲ-ի՝ Գործունեության նկատմամբ 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջները և իրականացնի ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ընթացակարգերը միկրո, ՓՄՁ և կորպորատիվ վարկավորման համար, ինչը ներառում է ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական բացառումների ցանկին համապատասխանություն և ՎԶԵԲ-ին տարեկան զեկույցների ներկայացում՝ Կայունության ինդեքսի միջոցով: Կպահանջվի, որ Կոնվերս Բանկի վարկի միջոցով ֆինանսավորվող ենթավարկառուները համապատասխանեն շրջակա միջավայրի, առողջության, անվտանգության և աշխատանքի նկատմամբ տեղական պահանջներին:

Տեխնիկական աջակցություն

ՏԱ. Տեխնիկական աջակցությունը կազմակերպվում է Արևելյան գործընկերության երկրների համար «Կանայք բիզնեսում» տարածաշրջանային ՏԱ ծրագրի մակարդակով և ֆինանսավորվում է Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության (SIDA) կողմից (2.2 միլիոն եվրո): Ծրագրով նախատեսված ՏԱ-ի՝ մեկ ֆինանսական հաստատությանը տրամադրվող միջին գումարը կազմում է 200,000 եվրոյից մինչև 300,000 եվրո:

ՏԱ-ին չառնչվող աջակցություն. Ծրագիրն ունի Առաջին կորստի ռիսկի ապահովագրական ծածկույթ ՎԶԵԲ-ի Փոքր բիզնեսի ազդեցության հիմնադրամի կողմից վարկային պորտֆելի մինչև 10%-ի և առանձին ենթավարկի համար մինչև 70% սահմաններում:

Իրականացման ամփոփագիր

Հավելյալություն

Ֆինանսավորման կառուցվածքը. ՎԶԵԲ-ն առաջարկում է տեղական արժույթով ֆինանսավորում այնպիսի պայմաններով, որոնք հասանելի չեն շուկայում, բայց անհրաժեշտ են ծրագրի նպատակների իրականացման համար:

Ստանդարտների սահմանում. օժանդակել, որպեսզի ծրագրերն ու հաճախորդները հասնեն ավելի բարձր չափանիշների. Կոնվերս Բանկն օգտվում է ավելի լայն ներառման և գենդերային ստանդարտների ոլորտում ՎԶԵԲ-ի փորձառությունից: Հավելյալությունը ձեռք է բերվում ՏԱ-ին չառնչվող դրամաշնորհի միջոցով, որը հնարավորություն է տալիս Կոնվերս Բանկին մուտք գործել «Կանայք բիզնեսում» (WiB) ծրագրի թերզարգացած սեգմենտ, ինչպես նաև ՏԱ փաթեթի միջոցով՝ աջակցելու Կոնվերս Բանկին պրոդուկտների մշակման գործում: Կոնվերս Բանկն օգտվում է ՎԶԵԲ-ի փորձառությունից նաև Փոքր բիզնեսի վերաբերյալ խորհրդատվության ոլորտում, որը նպատակաուղղված է «Կանայք բիզնեսում» հատվածին խորհրդատվության տրամադրմանը: Ծրագիրը կօգտվի նաև ՎԶԵԲ-ի փորձառությունից ավելի բարձր ֆինանսական ստանդարտների ապահովման համար, այդ թվում նաև՝ ֆինանսական կովենանտների միջոցով:

Ակնկալվող Անցումային ազդեցության (ETI) ցուցանիշը
80

Ընկերության կոնտակտային տվյալները

Հրանտ Հակոբյան
AkopianGrant@conversebank.am
+374 10511211 ext 1373
+374 10 511212
https://www.conversebank.am
Գլխամաս՝ 0010, Երևան, Վազգեն Սարգսյան փող. 26/1

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը։

Ընդհանուր հարցումներ

ՎԶԵԲ-ի ծրագրերի հետ կապված և գնումներին
չառնչվող հարցերով դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168; Ֆաքս՝ +44 20 7338 7380

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը։

ՏՀՔ-ի տեքստը

Ծրագրի բողոքարկման մեխանիզմ

ՎԶԵԲ-ը հիմնել է Ծրագրի բողոքարկման մեխանիզմը (ԾԲՄ՝ հնարավորություն ընձեռնելու անկախ եղանակով քննել անհատից կամ անհատներից կամ կազմակերպություններից ստացված բողոքները, որոնք վերաբերում են ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերին առնչվող այնպիսի խնդիրներին, որոնք, ենթադրաբար, որևէ վնաս են պատճառել (կամ հավանական է, որ վնաս կպատճառեն)։

ԾԲՄ-ն կառավարող ընթացակարգի կանոնները | Ռուսերեն տարբերակ

ԾԲՄ-ի ներքո ցանկացած բողոք պետք է ներկայացվի ՎԶԵԲ-ի միջոցների վերջին բաշխումից ոչ

ուշ, քան 12 ամիս անց: Կարող եք դիմել ԾԲՄ տնօրենին (pcm@ebrd.com) կամ ՎԶԵԲ-ի համապատասխան մշտական գրասենյակ, եթե վստահ չեք, թե ինչ ժամանակահատվածում պետք է ներկայացվի բողոքը: